



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

160
2

ԻՆՉ Ե ՊԱՏՄՈՒՄ ՔԱՐՏԵԶԸ



Պ Ե Տ Տ Վ Ա Տ
1 9 3 4

Օա մասնիկ

Առ իշտ մասրման ճոտը
մորասն

աւելի ճպահան

ուղարկում Դատդրություն

Հ.Ս.Ս.Ա.ՏՈՒՄ ԵՄ
ԽԱՀԱՐ ՊԱՀԱ, Ավագինի Կ. Խ. Բա-
խովսի տեղակալ՝ Բնիթուի
19 մայիսի 1934 թ.

Ի՞՞Ն Չ Ե

ՊԱՏՄՈՒՄ ՔԱՐՏԵԶԸ

Ռազմական տեղադրության նույասեցր կոմյերիտական-
ների յեկ աշխատավոր յերիտասարդության ռազմա-տեխ-
նիկական բննության համար

7
23895



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1934

Տեխ. Խմբագիր՝ Գ. Զենյան
Թարգմանիչ՝ Պ. Աքայան
Սրբագրիչ՝ Մ. Մարգարյան յել Թ. Լալայան

Պատվ. 1489 հրամ. 4057 գլուխ. 8322 տիբաժ 2000
Հանձնված և արտադրության 10 հոկտ. 1934 թ.
Սառըադրված և տպելու 31 հոկտ. 1934 թ.

Պետհրատի տպարան, Յերևան Լենինի փ. № 65

Բազմական տեղագրության մասին մենք տալիս
ենք ամենահիմնական և համառոտ տեղեկությունները։
Այդ տեղեկությունները կոգնեն կոմյերիտականներին և
անկուսակցական աշխատավոր յերիտասարդությանը
պատրաստվելու հասարակական ռազմատեխնիկական քըն-
նություն տալու համար։

Ամենից առաջ, ինչ և ռազմական տեղագրությունը։
Տեղագրությունը—մի գիտություն եւ վայրն իր բոլոր
մանրամասնություններով թղթի վրա նկարելու յեղա-
նակների մասին։ Բազմական տեղագրությունը—մի գի-
տություն եւ վայրը ռազմական նպատակների համար
քարտեզների ու պլանների վրա նկարելու մասին։

Քարտեզը (պլանը) վարժ կարդալ սովորելու և նը-
րանով ոգտվելու համար անհրաժեշտ ելավ յուրացնել-
ա) վայրի զանազան տեսակները, բ) մասշտաբը, գ) պայ-
մանական նշանները, դ) ռելյեֆի նկարումը և ե) կող-
մորոշման զանազան յեղանակները։

ԻՉՆՊԻՍԻ ՎԱՅՐ Ե ԼԻՆՈՒՄ


Վայրը լինում ե. բաց, ծածկված, կարտուկ, տափառակ, լեռնոտ, բլրավետ։ Նաևած այն խնդիրներին—պաշտպանություն, հարձակում, հետախուզություն, յեր-



Նկ. 1. Բաց վայր

թային շարժում և այլն, վոր լուծում են զորքերը, մին-նույն վայրը կարող ե կամ դժվարացնել, կամ հեշտացնել խնդրի լուծումը։

Բաց վայր (նկար. 1) կոչվում ե այնպիսին, վորը զուրկ ե կամ համարյա զուրկ ե խոշոր ռելյեֆից, այ- սինքն անհաջություններից, անտառներից, միջան-



Նկ. 2 Ծածկված վայր

տառակներից, բաղմաթիվ շինություններից, մի խոսքով այն բոլորից, ինչ կարող ե հակառակորդի աչքից ծածկվելու հնարավորություն տալ։


Ծածկված (նկար. 2) կոչվում ե այն վայրը, վորը

շատ այնպիսի առարկաներ ու ոելյեփ ունի, վորոնք կարող են աչքից ծածկել, այսինքն անտառներ, խոշոր թփուտներ, վայրի ծալքեր, ընակավայրեր:



Նկ. 3. Կերտակ վայր

Բաց ու ծածկված վայրը կարող է կտրտուկ լինել (նկար 3), այսինքն կարող է շատ այնպիսի տեղական առարկաներ ունենալ, վորոնք դժվարացնում են տեղից տեղ շարժումը, այն ե՛ ձորակներ, ցանկապատներ, գետակներ, ճահճներ, առուներ, մացառուտներ:




Տափարակ (նկար 4)
կոչվում է այնպիսի վայրը, վոր փոքր ի շատ և խոշոր ոելյեփ, այսինքն՝ խոշոր բարձրություններ ու ցածրություններ չունի:

Բլրավես և լեռնոս վայ-

նկ. 4 Տափարակ վայր ըի եյությունը հասկանալի է հենց դրանց անունից: Բլրավետ կոչվում է այն վայրը, վորը փոքր բարձրություններ ունի. սրանք, տա-

փարակ վայրի համեմատությամբ, հեշտացնում են պաշտպանողական մարտ մղելը։ Լեռնոտ կամ լեռնային կոչվում ե այն վայրը, վոր շատ խոշոր բարձունքներ,



Նկ. 5. Քարտեզի նմուշը

լեռներ ունի, վորտեղ մարտական գործողությունները

հնարավոր են միմիայն ճանապարհների լերկայնությամբ
և գետերի հովիտներով։ Մեզ մոտ ԽՍՀՄ-ում այդպիսի
վայրեր գոյություն ունեն Ուրալում և Կովկասում։

Վայրը միշտ ել միատեսակ տեսք չի ունենում։
Վայրի այս շերտում, վորտեղ տեղի յեն ունենում մար-
տական գործողությունները, բաց վայրը կարող ե յեր-
բեմն փոխարկվել ծածկված վայրով, տափարակը՝ բլրա-
վետ վայրով և այլն։

ԱՄԵՆԻՑ ՀԱՐՄԱՐԸ ՔԱՐՏԵԶՆ Ե

Վայրը կարելի յե ուսումնասիրել լեռեմ յեղանակով։
Անձնական դննությամբ, վայրի նկարագրություններով
և վայրի նկարներով։


Անձնական գննությունն ամենալավ յեղանակն ե,
բայց այդ լեղանակը կարելի յե գործադրել միայն
փոքր տեղամասերում։ Մեծ տեղամասը գժվար ե հիշողու-
թյան մեջ պահել։ Բացի այդ, անձնական դննությունը
միշտ ել հնարավոր չե, յեթե ժամանակը քիչ ե և տե-
ղամասը հեռու յե գտնվում կամ յեթե տեղամասը գըտ-
նը վում ե հակառակորդի կողմից գրաված շրջանում։
Ոդային հետախուզության և ինքնաթիւից անձնական
գննություն կատարելու ժամանակ այդ թերությունները
պակասում են։

Վայրի նկարագրությունը, նույնիսկ ամենամանրա-
մասն նկարագրությունը, չի կարող կարդացողին լիս-
կատար պատկերացում տալ։ ուստի ամենից հաճախ
գործադրվում ե վայրի ուսումնասիրության ամենատը-
մար, յերբորդ յեղանակը — նրա նկարների՝ քարտեղնե-
րի, պլանների, լուսանկարների միջոցով։

Քարտեզ կոչվում ե վայրի մեծ տեղամասի նկարը։
Քարտեղի նշաններն են. աստիճանացանցը՝ միջորեական-
ների և դուգահեռականների ձևով և աստիճանական մե-

ծությունները, վոր նշանակվում են քարտեզի անկյուններում ու նրա շրջանակների վրա:

Պլան կոչվում է վայրի փոքր տեղամասի նկարը: Պլանների նշաններն են. դա աստիճանացանց - միջուրեականներ և զուգահեռականներ չունի:



Նկ. 6

Քարտեզով կամ պլանով վայրը վորոշելու համար պետք է գտնել մեզ հարկավոր առարկաները, ճանապարհները և տեղամասերը, անհրաժեշտ ե սովորել՝ ինչպես կարդալ քարտեզն ու պլանը, արտինքն հասկանալ, թե ինչ և նրանց վրա նկարած:

ԻՆՉ Ե ՄԱՍՇՏԱԲԸ

Քարտեզի ու պլանի վրա իրական վայրի բոլոր գծերն ու հեռավորությունները նկարվում են փոքրացրած չափերով: Վայրի վրայի գծի իսկական չափերի համեմատությամբ քարտեզի կամ պլանի վրայի գծի փոքրացման աստիճանը կոչվում է քարտեզի կամ պլանի մասշտաբ: Որինակ՝ լեռք մենք ասում ենք՝ «մասշտաբը՝ 1 կիլոմետր 1 սանտիմետրում», ապա այդ նշանակում ե, վոր քարտեզի կամ պլանի վրայի 1 սանտիմետրի

հավասար գիծը համապատասխանում ե վայրի վրայի 1
կիլոմետր իսկական հեռավորութիւնը:


Մասշտաբը ցույց ե տրվում քարտեզի կամ պլանի
յուրաքանչյուր թերթի վրա (նկ. 5):

Մասշտաբը լինում ե թվական կամ զծային: Թվա-
կան մասշտաբը գրվում ե կոտորակի ձևով, վորի համա-
րիչը միշտ միավոր ե լինում, իսկ հայտարարը ցույց ե
տալիս, թե քանի անգամ պլանի կամ քարտեզի վրայի
գծերն ավելի փոքր են, քան վայրի վրայի գրանց հա-
մապատասխան գծերը: Վորքան հայտարարը մեծ ե,
այնքան մասշտաբն ավելի փոքր ե, իսկ վորքան հայ-
տարարը փոքր ե, այնքան մասշտաբն ավելի խոշոր ե:
Որինակ,

1	1	1
5.000	10.000	84.000

ավելի խոշոր ե, ավելի փոքր ե, եւ ավելի փոքր ե,

Ինչպէս հեռավորությունը վորոշել թվական մաս-
տաբի ոգնությամբ: Վերցնենք այսպիսի մի որինակ՝
1:21000 մասշտաբի քարտեզի վրա նկարած են գնդա-
ցիրը և նշանը (նկ. 6): Գնդացրից մինչև նշանը յեղած
հեռավորությունը վորոշելու հօժար, քարտեզի վրա չա-
փում ենք նշանից մինչև գնդացրիրը յեղած հեռավորու-
թյունը: այդ հավասար ե 7,6 սանտիմետրի: 7,6 սան-
տիմետրը բազմապատկում ենք մասշտաբի հայտարարով
և ստանում ենք՝ 7,6 սանտիմետր $\times 21,000 = 159.600$
սանտիմետրի, այսինքն
1596 մետր կամ, կոպիտ
կերպով, մեկուկես կի-
լոմետր:



Մասշտաբ՝ 50.մետր 1սմ-ում


նկ. 7

Թվական մասշտաբով աշխատելու ժամանակ հարկ ե
լինում շարունակ թվահաշիվներ կատարել: Այդ շատ ժա-
մանակ ե խլում և մարտական պարագայում անհարմատ ե:

Ուստի քարտեղի կամ պլանի յուրաքանչյուր թերթի վրա բացի այդ, նշանակում են այսպես կոչված զծային մասշտաբը (նկար 7):

Գծային մասշտաբը մի ուղիղ գիծ է, վոր սովորաբար բաժանված է մի քանի մասերի. այդ մասերը մակագրեր ունեն, վորոնք ցույց են տալիս, թե վայրի վրա ինչ հեռավորությունների լեն համապատասխանում գծի այդ մասերը քարտեղի կամ պլանի վրա:

Քննության առնենք գծային մասշտաբի կառուցումը՝ որինակով. Պետք է մի այնպիսի մասշտաբ կառուցել, վորի մեկ սանտիմետրը քարտեղի վրա համապատասխանի վայրի վրայի 50 մետրի: Ուղիղ գծի վրա մի քանի անգամ նշանակենք մի մի սանտիմետր (նկար 7): Առաջին սանտիմետրի վերջում (աջ ծայրին) դնում ենք դերո, վորը նշանակում է հաշվի սկիզբը դեպի աջ ու



Նկ. 8

ձախ: Զերոյից հետո դեպի աջ, առաջին սանտիմետրի վերջում դրում ենք վայրի վրա դրան համապատասխանող հեռավորությունը, այսինքն—50 մետր, յերկրորդ սանտիմետրի վերջում, դեպի աջ—100 մետր, յերրորդի վերջում—150 մետր և այլն. միջնական բաժանումների

մոտ գրում ենք միայն թվերը, իսկ չափերի անունները
(մետրը) գրում ենք գծի աջ ծայրի մոտ:

Քարտեղի վրա ճիշտ չափումներ կատարելու համար
ավելի մանր բաժանումներ են հարկավոր: Ուստի առա-
ջին սանտիմետրը, զերոյից դեպի ձախ, մենք մի քանի
մանր մասերի յենք բաժանում: Այդ սանտիմետրը 5
մասի բաժանելու դեպքում, լուրաքանչյուր մասի գինը
(այսինքն այս հեռավորությունը, վորին այդ մասը հա-
մապատասխանում ե վայրի վրա) հավասար կլինի 10
մետրի: Այդ մանր բաժանումներից յուրաքանչյուրի վրա,
զերոյից դեպի ձախ, պետք ե զբերինք համապատասխան
հեռավորությունները (10 մ., 20 մ., 30 մ., 40 մ.), բայց
տեղի սղության պատճառով, այդ սովորաբար՝ չի արվում:


Այն հատվածը, վորը, գծային մասշտաբ կառուցե-
լու ժամանակ, մի քանի անգամ նշանակվում ե ուղիղ գծի
վրա, կոչվում ե մասեարի հիմք: Նկար 7 վրա մասըշ-
տաբի հիմքն ե՝ 1 սանտիմետր. բայց այդ, յեթե հար-
կավոր ե, կարող ե լինել և 2, և 3 սանտիմետր և այլն:
Յերեքն զծային մասշտաբի վերևում նշանակում են,
թե վայրի վրայի վոր չափին ե համապատասխանում
մասշտաբի հիմքը: Դրա համար նկար 7 վրա գրած ե՝
«մասշտաբ՝ 50 մետր 1 սանտիմետրում»:

Ինչպես ոգտվել զծային մասեարով: Մի որինակ
քննության առնենք:

Քարտեղի մասշտաբն ե՝ 1 կիլոմետր 1 սանտիմետ-
րում: Գնդացըրից մինչև լեռնակի գագաթի վրա դիրք
գրաված նպատակը յեղած հեռավորությունը վորոշելու
համար, կարկինի մատներն այնքան ենք բաց անում,
վոր մատներից մեկի ծայրը քարտեղի վրա նշանի նկարի
վրա լինի, իսկ մյուս մատի ծայրը — գնդացըրի վրա
(նկար 8): Կարկինի այս բացվածքը մենք դնում ենք
մասշտաբի վրա. մի մատը զերոյով նշանակած բաժան-

ման վրա, իսկ մյուսը—ավելի աջ (նկար 9): Ցեղեւ այդ դեպքում կարկինի աջ մատը չի համընկնում մասշտաբի (հիմքի) ամբողջ բաժանման ծալրի հետ, ապա կարկինը շարժում ենք դեպի ձախ ալիքան, վոր կարկինի այդ մատն ամենամոտ բաժանման վրա, այսինքն ամբողջ բաժանման ծայրի հետ համընկնի (նկար 9):

Դրանից հետո մնում ե կարդալ հեռավորությունը, վորպես յերկու մատների ցուցմունքների գումարը, այն եւ 1 կիլոմետր (աջ մատը) և 850 մետր (ձախ մատը) = = 1850 մետր: Կարկինի ձախ մատի ծայրից մինչև մանը բաժանումների ծալրերը յեղած հեռավորությունը վորոշվում ե աչքաչափով:



Նկ. 9

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐՆ ԱՆԳԻՐ ԻՄԱՆՈՒ

Քարտեզների ու պլանների վրա անտառները, գետերը, ճանապարհները, շինություններն ու զանազան այլ տեղական առարկաները նկարելու համար գոյություն ունեն ընդհանրապես ընդունված պայմանական նշաններ: Այդ պայմանական նշանները պարզության համար կազմված են այնպես, վոր նրանք հիշեցնեն այն տեղական առարկաները, վորոնց դրանք պատկերացնում են: Պայմանական նշաններն իրարից խիստ տարբերվում են: Նրանք պարզ ու հարմար են գծագրելու համար: Վորպեսզի պայմանական նշանները հասկանալի լինեն յուրաքանչյուրի համար, նրանք տվյալ պետության մեջ պետք ե ընդունված լինեն ընդհանուրի կողմից: Պայմանական նշաններն իմանալու համար անհրաժեշտ ե դը-


ըանց գործնականորեն ուսումնասիրել քարտեղների ու պլանների վրա, նույնպես և մի քանի անդամ գծազրել պայմանական նշանները տետրում:

Պայմանական նշանները բաժանվում են կոնտուրա-
յին (ուրվագծային) ու մասշտաբային նշանների (նկ. 10),


Ուրվագծային պայմանական նշաններ



Բանջարանոց



Այգի



Մարգագետին

Մասշտաբային պայմանական նշաններ



Քառաղաց



Վեռոտասոյուն



Ծանապարհի
Առանձին ծառ
ցուցիչ




Նկ. 10

Կոնտուրային կոչվում են այն պայմանական նշանները, վորոնք լցնում են կոնտուրները, այսինքն մասշտաբով արտահայտված տեղական առարկաների ուրվագծերը: Որինակ՝ մեզ հարկավոր ե անտառ նկարել: Դրա համար մասշտաբի միջոցով հաշվելով, մենք գծադրում ենք գծերով այն մակերեսը, վոր գրավում ե անտառը, իսկ այդ գծերի ներսում նկարում ենք անտառի պայմանական նշանները:

Մասշտաբային կոչվում են այն պայմանական նըշանները, վորոնք պատկերացնում են փոքր չափեր ունեցող տեղական առարկաները՝ տուանձին ծառ, ջրաղաց, տուն, ճանապարհների ցուցիչ: Այդ տուարկաները մասշտաբով նկարել անհնարին ե, դրանք չափազանց փոքր են:

ՈԱԶՄԱԿԱՆ
ԴԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- | | |
|---|---|
|  | Հետեվակի յերթային սյուն հրետա
նու շտարի և միասին |
|  | Մէծնայացրած զորքերի յերթայուն |
|  | Հրետանային սյուն յերթում |
|  | Առանձին հետախուզական դետք
(ԱՀԴ) հեծելազորի մասերից |
|  | Առանձին հեծելադետք |
|  | Առանձին ջոկ (դասակ)
հարձակման ժամանակ |
|  | .. Պաշտպանության ժամանակ |
|  | .. Շարժման ժամանակ |
|  | Թեթև գնդացիր |
|  | Հաստոցավոր գնդացիր |
|  | Հակատանկային թնդանոթ |
|  | Նոնածիգների ջոկ |
|  | Ականանետ |

Նկ. 11



Մնայպեր



76մմ թնդանոթ



Կործանիչ



Հետախուզիչ



Գոռհող սալ



Բարակոծող սալ.




Հետախուզական ավեցիայի,
այծրողում




Տանկ




Տանկետկա



Հեռախոսագիծ




Հեռագրագիծ



Խրամատ պաշտպանության
համար իրամուղիով և ապաստպ
ուանով

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ



Նկ. 12



Ակ. 12

Այդ պատճառով ել դրանց նշանակում են պայմանական նշաններով, առանց նրանց չափերը հաշվի առնելու:

Վորոշ տեղական առարկաները, որինակ՝ բնակավայրերը, գերեզմանատները և այլն, խոշոր մասշտաբի ժամանակ նկարվում են իրենց ուրվագծերով (կոնտուրներով), իսկ փոքր մասշտաբի ժամանակ՝ մասշտաբային պայմանական նշաններով:

Ամենագլխավոր պայմանական նշանների աղյուսակները, վոր բերվում են այստեղ (նկարներ 11 և 12) պետք ե լավ անգիր իմանալ:

ՎՈՐՏԵՇՆ Ե ԱՎԵԼԻ ՈՒՂՂՈՐԴ ՎԵՐԵԼՔԸ

Վալրի անհարթությունները, այսինքն նրա բարձրություններն ու խորությունները, լեռները, փոսերը, կիրճները, ձորակները (նկար 13) քարտեզի կամ պլանի վրա նկարում են փակ կոր գծերով, վորոնք կոչվում են նորիզոնականներ:




Նկ. 13

14-րդ նկարի վրա ցույց են տրված վայրի ոելյեփի հիմնական բաղադրիչ մասերը՝ գաղաթները, հատակները, թամբարդները, սարանարթները, և զանազան լանջերը, վոր նկարված են հորիզոնականներով:

Ինչումն ե վայրի անհարթությունները (ոելյեփը)

հորդոնականներով նկարելու եյտթյունը և ինսպիրացիան են ստացվում հորիզոնականները քարտեղի կամ պլանի վրա: Յենթագրենք, թե վորեւ վայրում յեղած բլուրը (նկար 15) մենք կտրտում ենք հորիզոնական հարթություններով, վորոնք անցնում են իրարից հավասար:




Նկ. 14

հեռավորության (բարձրության) վրա: Այդ գեոլոգում բլրի լանջերի վրա կոր գծեր կստացվեն, վորոնք ցույց կտան: Յենթե վորտեղով են անցնում հատման ալդ հորիզոնական հարթությունները այդ փակ կոր գծերից (IV, III, II) գեղի ներքև ուղղաձիգ կետագծեր շարունակենք մինչև տուաջին հարթությունը և դրանց ծայրերը միացնենք փակ կոր գծերով, ապա այդ հարթության վրա կստանանք բլրի պատկերը պլանի ձևով:

Այստեղից կարելի յե նաև մի ուրիշ յեղբակացություն հանել հորիզոնականի մասին. հորիզոնականը մի գիծ ե, վորը միացնում ե վայրի անհարթությունների լանջերի վրայի միենույն բարձրության վրա յեղած բորը կետերը: Յեթե մենք դնանք ոելլեֆի լանջով այնպես, վոր վոչ իջնենք և վոչ ել բարձրանանք, ապա մենք կգնանք հորիզոնական դիրքով, և մեր հետքերից լանջե-

վրա կստացվի փակ կոր գիծ, այսինքն այդ լանջի հորիզոնականը:


Նկատի ունենալով, կոր քարտեզների և պլանների վրա բարձրություններն ու խորությունները նկարվում են միատեսակ հորիզոնականներով, ապա դրանց տարբերելու համար բարձրությունների գագաթները և փոսերի հատակները նշանակվում են. գծիկներով, կոր դրվում են վերջին հորիզոնականի վրա՝ գագաթի համար դրսից, իսկ հատակի համար ներսից (նկար 16):



Նկ. 15

Գագաթ

Հատակ



Նկ. 16


Բարձրությունների թվանշերը քարտեզների և պլանների վրա նշանակվում են թվերով՝ 98,2, 123 և այլն: Այդ թվերը տրվում են հենց գագաթի վրա վերջին փակ հորիզոնականի ներսում կամ լանջերի վրայի հորիզոնականի մոտ և ցույց են տալիս մետրերով կամ սաժեններով այն գագաթների կամ հորիզոնականների բարձրությունը, վորոնց մոտ նշանք դրված են:

Հորիզոնականները հնարավորություն են տալիս քարտեզով կամ պլանով վորոշել, թե վայրի վոր տեղամասն ե մեկը մյուսից ավելի բարձր կամ ավելի ցածը, վորանգ հարմար ծածկված մատուցներ կան այս կամ այն դիրքին մոտենալու համար, վորանգ ե լանջն ավելի ուղղորդ և վորանգ՝ ավելի թեք (վորքան հորիզոնականներն ավելի մոտիկ են իրարից, այնքան վերելքն ավելի ուղղորդ ե):

ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼ ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑՈՎ ՅԵՎ
ԱՍԴԵՐՈՎ

Կողմորուսվել—նշանակում և վորոշել իր տեղադրությունը աշխարհի կողմերի նկատմամբ, ճիշտ իմանալ, թե վորտեղ և հյուսիսը, վորաեղ և հարավը, վորտեղ և արևմուտքը և արեւելքը, պարզել շրջապատող առարկաները, վորոշել, թե ուր են գնում ամենամոտիկ ճանապարհները։ Կողմորոշվել կարելի յէ՝ կողմնացույցով, ժամացույցով ու արեգակով, ծառերով, աստղերով, քարտեզներով ու ողալուսանկարներով։


Կողմնացույցով (նկար 17) կողմորոշվում են հետեւյալ կերպ։ Պետք ե ազտել կողմնացույցի լծակը, կողմնացույցը դնել հորիզոնական հարթության վրա—ձեռքի ափի, հարթ տախտակի վրա և լերը կողմնացույցը սլաքը հանդստանա, կողմնացույցը պտտել այնքան, վոր սլաքի հյուսիսակին (սևացրած) ծայրը լինի հյուսիսը ցույց տվող «C» տառի դիմաց։ Այն ուղղությամբ, վորին ուղղված կլինի սլաքի սևացրած ծայրը, կլինի հյուսիսը իսկ դրան հակառակ ուղղությամբ կլինի հարավը, դեպի ձախ—արեմուտքը և դեպի աջ—արեւելքը, կողմորոշմբ վերջանելուց հետո, պետք ե սլաքն ամրացնել։



Նկ. 17

Ժամացույցով յեվ արեգակով (նկար 18) կողմորոշվում են հետեւյալ կերպ։ Ժամացույցի ժամ ցույց տը վոր սլաքը պետք ե ուղղել արեգակին։ Այդ դեպքում

24 Ժամվա թվատախտակ ունեցող ժամացույցի «12»-ը
միշտ ցույց կտա հարավի ուղղությունը։ 12 ժամվա
թվատախտակ ունեցող ժամացույցի վրա հարավի ուղ-



դությունը ցույց կտա այն գիծը, վորը կիսում և ժա-
մացույցի կենարոնից դեպի «12» թվանշանը տարած
գծի և ժամ ցույց տվող սլաքի ուղղության միջև յեղած

անկյունը, ըստ վորում մինչև կեսորն այդ դիծը կդնա
ժամ ցույց տվող սլաքից գեպի աջ, այսինքն գեպի
նրա շարժման ուղղությունը, իսկ կեսորից հետո գեպի
ձախ, այսինքն նրա շարժման ուղղությանը հակառակ
կողմը: Հարավն իմանալուց հետո, կարելի յե վարշել
նաև աշխարհի մէտս կողմերը:

Մառերով կողմորոշվում են շատ պարզ կերպով:
Առանձին կանգնած ծառերի նյուղերը սովորաբար ավելի
խիտ են լինում հարավային կողմից: Մառերի կեղեվը
հյուսիսային կողմից ավելի կոպիտ ե լինում և յերեսն
մամուռով ծածկված ե լինում: Մառերի սղոցած բների
վրայի տարեկան շերտերը միշտ իրարից տվելի մոտիկ
են լինում հյուսիսային կողմից և ավելի հեռու՝ հարա-
վային կողմից:


Բեմեռային աստղով. (նկար 19) կողմորոշվելու
համար պետք ե ամենից առաջ դանել Մեծ Արջի հա-
մասաեղությունը: Յերեակայորեն գեպի վեր շարունա-
կել այն գիծը վորը միացնում ե յեզրի յերկու աս-
տրդը և այդ գծի վրա մոտավորապես 5 անգամ նշանա-
կել ալդ յերկու աստղերի միջև լեղած հեռավորությու-
նը: Այն ժամանակ ալդ գիծը դեմ կառնի բեվեռային աս-
տրդին, վոր գտնվում ե Փոքր Արջի համաստեղության
մեջ, նրա պոչին (7 աստղ ե շերեփի ձեռվ ինչպես և
Մեծ Արջը միայն հակառակ կողմն ե ուղղված):

Յերեսը դարձնելով Բեմեռային աստղին, մենք
կստանանք հյուսիսի ուղղությունը:

Քարենզով կողմորշվում են բաց վայրում, ամենից
լավը ե ճանապարհի վրա: Ճանապարհի վորներ կետում
կանգնելով և նայելով ճանապարհի ուղղությամբ, քար-
տեզը պետք ե անպես դարձնել, վոր քարտեզի վրայի
ճանապարհը նույն ուղղությունն ունենա, ինչ վոր
վայրի վրա, իսկ ճանապարհի յերկու կողմի տեղական

առարկաները ճանապարհի նկատմամբ նույնն ուղղությունն ունենալու, ինչ վոր քարտեզի վրա:


Քարտեզը կամ պլանը կողմորոշում են կողմնացույցով: Դրա համար կողմնացույցը դնում են քարտեզի կամ պլանի շրջանակի արևմտյան կամ արևելյան, ալ-



Նկ. 16

սինքն ձախ կամ
աջ կողմի վրա այն-
պես, վոր կողմնա-
ցույցի հատակի
վրայի հյուսիս-հա-
րավ գիծը միշտ համ
ընկնի քարտեզի
վրայի հյուսիս-հա-
րավ գծի հետ. դրա-
նից հետո քարտեզը
կողմնացույցի հետ
միասին շարժում
են դեպի աջ կամ
ձախ կողմն այն-
քան, վոր իրար
հետ համընկնեն:
կողմնացույցի ուղ-

քի հյուսիսային (սեփացրած) ծայրը, կողմնացույցի հա-
տակի վրայի «C» տառը և քարտեզի վրայի հյուսիսի-
ուղղությունը:



Նկար 20. Աջևառանիքին պլան բարեհական լին պլան նկառելու վարժությունների նամակ:

ՍՏՈՒԳԻՐ ՔԵԶ

1. Ի՞նչպիսի վայր ե լինում և ինչպես կարելի յեռագումասիրել այն:
2. Ի՞նչ տարբերություն կա պլանի և քարտեղի միջև:
3. Ի՞նչն ե կոչվում ե թվական և գծային մասշտաբ:
4. Ինչպես են նկարվում ճանապարհները (յերկաթուղիները, խճուղիները, դաշտային ճանապարհները):
5. Ինչպես ե նկարվում գյուղը և ինչպես իմանալ թե գյուղում քանի տուն կա:
6. Ինչպես են նկարվում դետը, գետակը, կղզին:
7. Ինչպես են նկարվում այգին ու բանջարանոցը:
8. Ինչպես են նկարվում անցանելի ու անանցանելի ճանահաները:
9. Ինչպես ե նկարվում անտառը (կոտորած, այրված, տերևափոր, փշատերև և խառն անտառները):
10. Ինչպես են նկարվում առանձին ժառերը (փշատերև և տերևափոր ծառեր):
11. Ինչպես են նկարվում գործարանը, Փարբիկան, յեռանկյունաչափական կետը:
12. Ինչպես են նկարվում ձորակը, բլուրը, փոսը:
13. Ինչպես ե նկարվում հրետանիունեցող յերթասյունը:
14. Ինչպես են նկարվում հրաձգալին ջոկերը (դասականեր) հարձակման և պաշտպանության ժամանակ:
15. Ինչպես են նկարվում թեթել ու հաստոցավոր գնդացիրները, նունանետները, սնայպերը, 76 միլիմետրանոց թնդանոթը:
16. Ինչպես են նկարվում ինքնաթիւների զանազան տեսակները:

17. Ինչպես են նկարվում տանկը, տանկետկան՝ դրահամեքենան:

18. Ի՞նչ և հորիզոնականները և նրանցով ինչ են նկարում:

19. Ինչպես և ի՞նչ բեղանակներով կարելի յե կողմութոշվել:

20. Պանի կամ քարտեզի վրա վորտեղ և դանվում հյուսիսը, հարավը, արևմուտքը, արևելքը և ինչպես այդ վորոշել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳԼԽԱՎՈՐԸ ԿԱՐԳՆ Ե

Տեղագրության վերաբերյալ համառոտ տեղեկություններն ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ են ամախ՝ պահպանել տվյալ նյութի բացատրության հաջորդականությունը, յերկրորդ՝ հաջորդ հատվածի մշակմանը չանցնել, մինչև վոր լավ յուրացված չլինի նախորդը: Յուրաքանչյուր հատվածի յուրացումն ստուգել կոնտրոլ (վերստուգիչ) հարցերով:

Մասշտաբն ուսումնասիրել դորձնականորեն պլանի վրա: Դրա համար հարցի թեորիան (տեսական կողմը) յուրացնելուց հետո, պլանի վրա մի քանի ուղղություններ ընտրել և կարկինի, մասշտաբային քանոնի կամ ուղղակի մի թղթի կտորի ողնությամբ այդ ուղղությունների վրա չափել հեռավորությունները վորեմ յերկու կետի միջև:

Պայմանական նշանները հանձնարարվում ե 2—3՝ անդամ նկարել տետրակում, վորից հետո անցնել պլանի վրա նրանց կարդալուն: Նույն յեղանակով ուսումնասիրել վայրի անհարթություններ նկարելը:

Կողմօրոշման յեղանակներն ուսումնասիրելիս, նախ պետք ե լուրացնել կողմացուցը, այսինքն լուրացներ նրա կառուցվածքը և ինչպես պետք ե ոգտվել նրանով:

Դրանից հետո պետք անցնել կողմորոշմանը ժամացույցի և արեգակի միջոցով, ապա յուրացնել կողմորոշումը բերվեռալին աստղով, ծառերով և վերջապես լավ յուրացնել քարտեզի ու պլանի կողմորոշումը կողմացույցի միջոցով։

Նյութի մշակումն ամենից լավ և անցկացնել վորքը խմբակներում, վորպես ղեկավարներ հրավիրելով այն ընկերներին, վորոնք լավ գիտեն տեղագրությունը։

Բոլոր հատվածները լավ յուրացնելուց և անհատութեն քննություն աալուց հետո, կոմիտեի ականը քննական անդորրագիր և ստանում, վորը ներկայացնում և իր ձեռնարկության հասարակական Ռազմա-տեխնիկական քննության շուաբին։

Ձեռնարկներ.— 1. Սվենցիցիկ «Համառոտ տեղագրություն»։ 2. կողմացույց, կարկին, մասշտաբային քանոն։

ՔԱՆԱԿԱՆ ՔԱՐՄԱՆ ՆՄՈՒՀԱՆ

ԱՐՄԱՏԱՅ ՔԱՆԱԿԱՆ ՔԱՐՄԱՏ Բ.

1. ՔԻՆՈՆՔ ԼՈՒՆԱ ԱՊԳԱՆԱՆ ՄԱՆ, ԱՆԴՐԱ-
ՆԱ Կ ՀԱՄԱՅՆՈՒՆԱԾ

2. ՎՈՐ ԼՈՂՄԱՆԻ ԼՈՒՐ ԵԼ ՄԱՆ Կ պատկանում
է պատկանած պարագաների մասն և պատկանում

3. Ջեղադրության ռազմա - սեփական քաղաքան
իշխանության քննության գնահատականը
(գերազանց լավ) ընդունելու բարակ անձնանության
դիմությունն ընդունող անձնանության
առողջությունը լինելու մասն պահանջանա

ՔԻՆԱԿԱՆ Կ ՀԱՄԱՅՆՈՒՆԱԾ

ՔՈՆԱԿԱՆ ԱՆԳՐԱԿԱՐ Բ.

1. ՔԻՆՈՆՔ ԼՈՒՆԱ ԱՊԳԱՆԱՆ ՄԱՆ, ԱՆԴՐԱ-
ՆԱ Կ ՀԱՄԱՅՆՈՒՆԱԾ


2. ՎՈՐ ԼՈՂՄԱՆԻ ԼՈՒՐ ԵԼ ՄԱՆ Կ պատկանում
է պատկանած պարագաների մասն և պատկանում

3. Ջեղադրության ռազմա - սեփական քաղաքան
իշխանության քննության գնահատականը
(գերազանց լավ) ընդունելու բարակ անձնանության
դիմությունն ընդունող անձնանության
առողջությունը լինելու մասն պահանջանա

ՔԻՆԱԿԱՆ Կ ՀԱՄԱՅՆՈՒՆԱԾ

Կ Տ


Կ Տ



ՑԱՆԿ

Եջ

1. Խնչպիսի վայր և լինում	2
2. Ամենից հարմարը քարտեղն և	4
3. Ինչ և մասշտաբը	7
4. Պայմանական նշաններն անդիք իմանալ	12
5. Վորտեղ և ավելի ուղղորդ վերելքը	18
6. Շանապարհ գնայ կողմացույցով և աստղերով	21
7. Ստուգիք քեզ	26
8. Ուսման ժաւանակ գլխավորը կարգն և	27
9. Քննական քարտի նմուշը	29



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002769

094.

A II
23895

ԳՐԵՑ 50 Կ.



О чём рассказывает карта
ГИЗ ССР Армения, Эривань, 1934